«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № __157§10_____ ___15____ _____10_____ 2026թ.

ՀՀ. ք. Իջևան 4001 Ուսանողական 3
Քաղվածք

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ, ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման և փաստաթղթերի տրամադրման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 32-րդ կետի 12-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Ս.թ. հոկտեմբերի 15-ից ԵՊՀ ԻՄ կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման և փաստաթղթերի տրամադրման դեպքում կիրառել ԵՊՀ ռեկտորի՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման և փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և վճարաչափերը հաստատելու մասին» 2026թ. հոկտեմբերի 13-ի թիվ 195/98 – Լ հրամանով հաստատված դրույթները:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետին (Ա.Դավթյան):
3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչությանը, ֆինասական ռեսուրսների կառավարման բաժնին, անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնին, ուսումնամեթոդական վարչության պետին և բոլոր աշխատողներին:
4. ՏՀՍԶ բաժնին՝ ԵՊՀ ռեկտորի և սույն հրամանները սահմանված կարգով հրապարակել մասնաճյուղի կայքում:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ ԱԿԻԱ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ Ժ/Պ Վ. Խ. ԱՂԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 195/98-Լ «13» 10 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման և փաստաթղթերի տրամադրման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ՝

1. ԵՊՀ-ի կողմից ներքոհիշյալ ծառայությունների մատուցման ու փաստաթղթերի տրամադրման համար սահմանել հետևյալ կարգը, ժամկետները և վճարաչափերը.

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ (ԱՇԽ. ՕՐ)	ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1.	ԵՊՀ ասպիրանտուրայում ուսումնառության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	3	7000
2.	ԵՊՀ-ից ազատվելու (հեռացվելու) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	3	5000
3.	ԵՊՀ կողմից տրված դիպլոմի կրկնօրինակի տրամադրում	7	15000

4.	ԵՊՀ կողմից տրված դիպլոմի հավելվածի կրկնօրինակի տրամադրում (մինչև 2010 թվականը տրված դիպլոմի հավելվածի կրկնօրինակը տրամադրվում է տվյալների առկայության դեպքում)	10	10000
5.	ԵՊՀ կողմից տրված նոր ձևանմուշի դիպլոմի հավելվածի (15 թերթ) հաստատում	2	5000
6.	ԵՊՀ կողմից տրված դիպլոմի իսկության հաստատում	3	10000
7.	ԵՊՀ կողմից տրված դիպլոմի կամ դիպլոմի հավելվածի իսկության հաստատում՝ օտարերկրյա կազմակերպությունների հարցմամբ	5	50000 (կամ համարժեք արտարժույթ)
8.	ԵՊՀ նախկին և ներկա աշխատակիցների աշխատանքային ստաժի հաստատում՝ օտարերկրյա կազմակերպությունների հարցմամբ	5	5000
9.	Ակադեմիական տեղեկանքի տրամադրում	7	15000
10.	ԵՊՀ ուսանողական տոմսի կրկնօրինակի տրամադրում	5	7000
11.	ԵՊՀ-ում ուսումնառած առարկաների, դրանց նպատակների, թեմաների, հանձնարարությունների, գնահատման ձևերի, գրականության ցանկերի կամ նմանատիպ տեղեկատվության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (տրվում է տվյալների առկայության դեպքում)՝	10	Առաջին էջի արժեքը՝ 10000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հաջորդող էջի արժեքը՝ 500 ՀՀ դրամ

12.	2007 թվականից հետո ուսումնառած առարկաների նկարագրիչների հաստատում և թարգմանություն (անգլերեն)	10	Յուրաքանչյուր էջի արժեքը 1500 ՀՀ դրամ
13.	մինչև 2007 թվականը ուսումնառած առարկաների նկարագրիչների հաստատում և թարգմանություն (անգլերեն) (կատարվում է տվյալների առկայության դեպքում)՝	20	յուրաքանչյուր էջի արժեքը՝ 1500 ՀՀ դրամ
14.	ԵՊՀ-ում 1980թ սկսած աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի (ըստ տարիների բացվածքի) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (ներառյալ ժամավճարային հիմունքներով կամ համատեղությամբ կատարված աշխատանքի)	5	Առաջին էջի արժեքը՝ 5000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հաջորդող էջի արժեքը՝ 500 ՀՀ դրամ
15.	Կենսաթոշակի նշանակման համար ՀՀ միասնական սոցիալական ծառայություն ներկայացվող տեղեկանքի տրամադրում	3	3000
16.	ԵՊՀ կողմից տրամադրվող փաստաթղթի թարգմանություն	5	10000
17.	ԵՊՀ կողմից թարգմանված փաստաթղթի հաստատում	2	3000
18.	Ապոստիլով հաստատելու համար ԵՊՀ փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում	2	7000
19.	Այլ տեսակի և բնույթի տեղեկանքի տրամադրում	5	15000

2. Սահմանել, որ՝

1) Սույն հրամանի 1-ին կետում ներկայացված աղյուսակի 1-4-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 14-15-րդ և 19-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը ԵՊՀ աշխատողներին տրամադրվում են անվճար.

2) ԵՊՀ-ում տվյալ պահին սովորող ուսանողներին տեղեկանքները (հայերենով) տրամադրվում են անվճար.

3) Սույն հրամանի 1-ին կետում ներկայացված աղյուսակի 11-13-րդ ենթակետերում սահմանված ծառայությունների մատուցման համար պահանջվող առարկաների նկարագրիչները, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության և Արխիվի բաժնի պահանջով կրթական ստորաբաժանումները (ֆակուլտետ, ինստիտուտ և այլն) պարտավոր են ներկայացնել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում.

4) Սույն հրամանի 1-ին կետում ներկայացված աղյուսակի 3-րդ, 4-րդ, 9-րդ, 11-րդ և 14-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը շրջանավարտին, կամ աշխատողին (ներառյալ՝ նախկին) տրամադրվում են անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ ներկայացնելու, կամ այլ անձի՝ նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր ներկայացնելու դեպքերում.

5) Սույն հրամանի 1-ին կետում ներկայացված աղյուսակում նշված փաստաթղթերը դիմողին տրամադրվում են, սահմանված ժամկետում, իսկ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում՝ 20-օրյա ժամկետում:

3. Սույն հրամանի ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 13.09.2021 թ. թիվ 169/23, 01.09.2023 թ. թիվ 167/87-Ա, 20.10.2023 թ. թիվ 201/105-Լ հրամանները:

4. Սույն հրամանի նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավարին (Դ.Հովհաննիսյան) և ԵՊՀ միջազգային կապերի, զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորին (Մ.Հովհաննիսյան):

5. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը, հաշվապահական հաշվառման վարչությանը, միջազգային համագործակցության վարչությանը, արխիվի բաժնին, ռեկտորի աշխատակազմի ղեկավարին և բոլոր աշխատողներին:

6. ԵՊՀ ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով հրապարակել ԵՊՀ կայքում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ